



Դ. ԿԻՐԱԿԻ ՅԻՆԱՆՑ (ճաշոց էջ 273)



ԺԱՄԱՄՈՒՏ

Քրիստոս յարութիւն առաւ մեռելներէն, իր մահով մահը խորտակեց եւ իր յարութեամբը մեզի կեանք պարգեւեց. յաւիտենապէս փա՛ռք Ասոր. ամէն:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ՔԿ.

Քու աստուածութեանդ լոյսով, Քրիստոս, լուսաւորեցիր սուրբ Եկեղեցին. անշարժ պահէ զայն յաւիտեան:

Այսօր Երուսաղէմը կը տօնէ հաւատացեալներու բազմութեան հետ Սուրբ Եկեղեցոյ Նաւակատիքը, անշարժ պահէ զայն յաւիտեան:

Բացուեցան Նոր Սիոնի հաւատքի դռները, առազաստին մէջ ընդունելու անմահ Փեսաղ, անշարժ պահէ զայն յաւիտեան:

ՄԵՍԵՂԻ (Սաղմոս 64, 2 , 65, 2 եւ 66, 2)

Աստուած իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը վայելէ եւ Երուսաղէմի մէջ քեզի աղօթքներ թող բարձրանան:

Ո՛վ դուք, բոլոր երկիրներդ, Աստուծոյ աղաղակեցէ՛ք, իր անունին սաղմոսներ հիւսեցէք եւ անոր ամենօրինեալ անունը փառաւորեցէք:

Աստուած իմ, ողորմէ՛ մեզի եւ օրինէ մեզ, դէմքդ մեզի դարձո՛ւր եւ ողորմէ մեզի:


ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԻՍՈՒՄԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՍԸ

Առաքեալներուն Գործերէն Է այս ընթերցուածը:

(Գ. Առք. 13, 44 - 14, 6)

Յաջորդ Շաբաթ օրը գրեթէ ամբողջ քաղաքը հաւաքուեցաւ՝ լսելու համար Աստուծոյ խօսքը: Ի տես այս բազմութեան, Յրեաները լեցուեցան նախանձով եւ հայիոյանքներով կ'ընդդիմանային Պօղոսի խօսքերուն: Իսկ Պօղոս եւ Բառնաբաս համարձակութեամբ յայտարարեցին. «Նախ ձեզի պարտէիք քարոզել Աստուծոյ խօսքը, սակայն քանի որ զայն կը մերժէք եւ ձեզ արժանի չէք համարեր յաւիտենական կեանքին, ահաւասիկ մենք կ'երթանք հեթանոսներուն: Այսպէս հրամայեց մեզի Տէրը. «Դրի քեզ լոյս հեթանոսներուն, որպէսզի փրկութիւնը հասցնես մինչեւ աշխարհի ծայրը»: Այս խօսքերուն վրայ, հեթանոսները սաստիկ ուրախացան եւ փառաւորեցին Տիրոջ խօսքը եւ բոլոր անոնք, որոնք սահմանուած էին յաւիտենական կեանքին՝ հաւատացին: Այսպէս Աստուծոյ խօսքը տարածուեցաւ ամբողջ շրջանին մէջ: Յրեաները սակայն, գրգռեցին աստուածապաշտ ազնուազարմ տիկիներ եւ քաղաքին պարագլուխները, հալածանք յարուցին Պօղոսի եւ Բառնաբասի դէմ եւ դուրս հանեցին զանոնք իրենց սահմաններէն: Անոնք իրենց ոտքերուն փոշին թօթափելով անոնց վրայ, եկան Իկոնիոն: Իսկ աշակերտները՝ լեցուեցան ուրախութեամբ եւ Սուրբ Յոգիով:

Իկոնիոն միասին մտան հրեաներուն ժողովարանը եւ նոյնպէս խօսեցան ու բազմաթիւ հրեաներ ու յոյներ հաւատա-



ցին: Բայց անհաւան հրեաները գրգռեցին հեթանոսները եւ չարացուցին զանոնք եղբայրներուն դէմ: Պօղոս եւ Բառնաբաս երկար ժամանակ շրջեցան եւ համարձակ խօսեցան եւ Տէրը կը վկայեր իր շնորհքի խօսքին, անոնց ձեռքով նշաններ եւ հրաշքեր գործելով: Քաղաքին բնակչութիւնը երկու հատուածներու բաժնուեցաւ. ոմանք հրեաներուն կողմն

էին, իսկ ուրիշներ՝ Առաքեալներուն: Երբ հեթանոսները եւ հրեաները, գլխաւորութեամբ իրենց պետերուն, կը պատրաստուէին զանոնք չարչարելու եւ քարկո-

ծելու՝ անոնք լուրը առին եւ փախան Լիկոնացիներու քաղաքները, Լիւստրոս եւ Դերբէ, եւ շրջակայ գաւառը եւ այլևս եղ կը քարոզէին:

Ալէլուիա, Ալէլուիա,

Ո՛վ Երուսաղէմ, դուն Տէ՛րը օրհնէ: Եւ դուն ալ ո՛վ Սիոն, քու Աստուածդ օրհնէ:
(Սաղմոս 147, 12)

Ալէլուիա:

**ԱՒԵՏԱՐԱՆ
ՅԻՍՈՒՄԻ ԻՇԵԱՆՈՒԹԻՒՆԸ
(Յովհ. 5, 19-30)**

Տէրն մեր Յիսուս Քրիստոս պատասխանեց անոնց. «Ճըշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Որդին ոչինչ կրնայ ընել ինքնիրմէ, եթէ չտեսնէ Յայրը, որ կ'ընէ: Որովհետեւ ինչ որ Յայրը կ'ընէ, նոյնը կ'ընէ նաեւ Որդին: Յայրը կը սիրէ Որդին եւ ցոյց կու տայ անոր իր բոլոր գործերը: Դեռ ասոնցմէ աւելի մեծ գործեր ալ ցոյց պիտի տայ անոր, եւ դուք պիտի զարմանաք: Ինչպէս որ Յայրը մեռելները կը յարուցանէ եւ անոնց կեանք կու տայ, այնպէս ալ Որդին, կեանք կու տայ որուն ինք ուզէ: Յայրը մարդ չի՛ դատեր՝ այլ ամէն դատաստան տուաւ Որդիին, որպէսզի ամէնքը պատուեն Որդին, ինչպէս որ կը պատուեն Յայրը: Ով որ Որդին չի պատուեր, չի պատուեր նաեւ Յայրը, որ զինք ղրկեց: Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ով որ իմ խօսքս լսէ եւ հաւատայ Անոր, որ զիս ղրկեց՝ կ'ընդունի յաւիտենական կեանքը, եւ դատաստանի չ'ենթարկուիր, այլ կ'անցնի մահէն՝ կեանքի: Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, կու գայ ժամը, արդէն իսկ հասած է, երբ մեռելները պիտի լսեն Աստուծոյ Որդիին ձայնը եւ լսողները՝ պիտի ապրին: Որովհետեւ ինչպէս որ Յայրը կեանքն ունի ինքնիր մէջ, նոյնպէս ալ տուաւ



Որդիին՝ ինքնիր մէջ կեանքն ունենալ: Տուաւ անոր իշխանութիւնը՝ դատելու, որովհետեւ Մարդու Որդին է: Մի՛ գարմանաք, կու գայ ժամը, երբ ամէնքը, որոնք գերեզմանի մէջ են, պիտի լսեն Անոր ձայնը եւ պիտի ելլեն: Անոնք, որոնք բարիք ըրած են՝ կեանքի յարութեան համար, իսկ անոնք, որոնք չարիք գործած են՝ դատապարտութեան յարութեան համար: Ես ինձմէ ոչինչ կրնամ ընել: Կը դատեմ ինչպէս որ կը լսեմ, եւ դատաստանս արդար է, որովհետեւ ես իմ կամքս չեմ փնտռեր, այլ՝ կամքն Անոր, որ զիս ղրկեց:

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ Անդամալոյծին բուժումին ընդմէջէն


Յիսուս կը բացայայտէ Զօրմէն ստացած իշխանութիւնները

Յիսուս, շաբաթ օրով, կը բուժէ անդամալոյծ մը, որ երեսուն ութ տարիներէ ի վեր հիւանդ կը պառկէր: Զրեաները կը հետապնդէն Յիսուսը որ շաբաթ օր նման գործ մը ըրաւ. կ'ուզէն դատապարտել զինք, ճիշտ այնպէս ինչպէս հետագային ամբաստանեցին Չինք Պիղատոսի առջեւ ըսելով թէ ոչ միայն շաբաթը չի պահեր, այլ Աստուած իր Զայրը կը կոչէ եւ ինքզինք Աստուծոյ հաւասար կը դատէ (Մատթ. 26,65):

Յիսուս կ'ըսէ հրեաներուն՝ Զայրս միշտ կը գործէ, ես ալ միշտ կը գործեմ, որովհետեւ ինչպէս որ Զայրը կեանքս ունի ինքնիր մէջ, այնպէս ալ Որդին տուաւ, որ իր անձին մէջ կեանք ունենայ: Որովհետեւ ինչ որ Զայրը կ'ընէ, նոյնը կ'ընէ նաեւ Որդին: Ինչպէս որ Զայրը հիւանդներուն առողջութիւն կու տայ, այնպէս ալ Որդին կը բուժէ հիւանդները: Զայրս է որ կը գործէ իմ միջոցաւ. արդարեւ ես եւ Զայրս մէկ ենք:

Ինչպէս որ Զայրը մեռելները կը յարուցանէ եւ անոնց կեանք կու տայ, այնպէս ալ Որդին, կեանք կու տայ անոր որ ինք ուզէ: Որովհետեւ կեանքը Անով էր եւ կեանքը՝ լոյսն էր մարդոց, վկայեց սուրբ Յովհաննէս Ասոր մասին (Յովհ.1,4):

Զայր Աստուած կ'ուզէ որ մարդիկ պատուեն Որդին ինչպէս որ զինք կը պատուեն. կ'ուզէ որ մարդիկ լսեն Որդին հօսքը եւ ընդունին զայն, որովհետեւ միայն Յիսուսին եւ Ասոր հօսքին հաւատացողը պիտի փրկուի, պիտի անցնի մահէն եւ պիտի ընդունի



յաւիտենական կեանքը: Զոս կը տեսնենք թէ որքան կարեւոր է Աստուծոյ խօսքը լսելը, այսինքն սուրբ Բարդուղիմէոսը շարունակ լսելը, կարդալը եւ ուսումնասիրելը: Ընթերցումը եւ խորհրդրդածութիւնը Սուրբ Գիրքին կարեւոր գործ է քրիստոնեային համար: Ինչպէս կ'ըսէ Սուրբ Եփրեմ, Աստուծոյ հօսքը կեանքի անսպառ աղբիւր մըն է: Այսպէսով է որ մենք կրնանք պատուել Զայրը եւ Որդին:

Զայրը Ասոր տուաւ նաեւ իշխանութիւն դատաստան ընելու երբ կու գայ ժամը ուր մեռելները պիտի լսեն Ասոր ձայնը եւ գերեզմաններէն դուրս պիտի գան. անոնք որ բարիք ըրած են՝ կեանքի յարութեան համար, իսկ անոնք որ չարիք գործած են՝ դատապարտութեան համար:

Որդին սակայն ոչինչ կրնայ ընել ինքնիրմէ եթէ չտեսնէ Զօրը օրինակը, որովհետեւ ինչ որ Զայրը կ'ընէ, նոյնը կ'ընէ նաեւ Որդին եւ կը դատէ այնպէս ինչպէս որ կը լսէ Զօրմէն, որովհետեւ Յիսուս կ'ըսէ՝ ես իմ կամքս չեմ փնտռեր, այլ կամքն Ասոր որ զիս դրկեց: